

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Զիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (14 ժամ) ուցուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողով է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատանքը, որին հավակնում է (Ձև1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- 3 Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները դրանց առկայության դեպքում,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **օգոստոսի 28-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00- ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերն ընդունումը կանցկացվի ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա **օգոստոսի 29-ին ժամը 12:00-ին**, Շիրակի մարզի Զիթհանքովի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094821376 հեռախոսահամարով: